Սասուն Մ. Հարությունյան

ԱՌԱՋԻՆ ՏՊԱՐԱՆԻ ԵՎ ԹՂԹԻ ԳՈՐԾԱՐԱՆԻ ՀԻՄՆՈՒՄԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

Հայկական տպագրության 500 - ամյակի առթիվ*

Մուտք

Մարդկության պատմության ընթացքում կատարված կարևորագույն հայտնագործություններից մեկը տպագրության գյուտն է, որը հեղաշրջում առաջացրեց քաղաքակրթության զարգացման մեջ:

Տպագրության արվեստն աննկատ չմնաց նաև հայ ժողովրդի կողմից, ուստի գուտենբերգյան գյուտից կարճ ժամանակ անց Վենետիկում և ապա Եվրոպայի հայկական այլ գաղթօջախներում տպագրվեցին առաջին հայատառ գրքերը, ստեղծվեցին հայալեզու տպարաններ: Սակայն Հայաստանում առկա քաղաքական ու սոցիալ-տնտեսական ծանր պայմանները սկզբում հնարավորություն չէին տալիս սեփական երկրում տարածել տպագրությունը: Այդուհանդերձ, տպագրության գյուտից մոտ երեք հարյուր երեսուն տարի հետո՝ 1771 թ. հաջողվում է Հայաստանում ևս ստեղծել առաջին տպարանը:

1. Սիմեոն Երևանցու պայքարն Էջմիածնում տպարան հիմնելու համար

Ինչպես իրավացիորեն գրում էր Գ. Զարբհանալյանը՝ «Հայկական նուիրապետութեան աթոռոյն՝ Էջմիածնի հռչականուն վանաց մէջ առաջին տպարան հաստատողն եղաւ Սիմէոն կաթողիկոս...»[1]: Արձանագրելով այն իրողությունը, որ Սիմեոն Երևանցին մեծ դժվարություններ հաղթահարելով է կարողացել հասնել այդ նպատակին, Լեոն հավելում էր. «Այստեղ արդեն լիուլի արտահայտվում է Սիմեոն կաթողիկոսի խիզախ, ձեռնարկող ոգին, կամքի ուժը, վառ սերը դեպի կուլտուրական հիմնարկությունները»[2] :

Կարդալով Սիմեոն Երևանցու «Յիշատակարանը»՝ նկատում ենք, որ 1765-ից սկսած կաթողիկոսը նամակագրական կապերի մեջ էր տարբեր մարդկանց հետ՝ տպարանի հիմնադրման հարցերով: Այսինքն՝ կաթողիկոս ընտրվե-

*Յոդվածն ընդունվել է տպագրության 09.03.2012:

1 **Գ. Յ. Զարբհանալեան,** Պատմութիւն հայերէն դպրութեանց, Վենետիկ 1905, էջ 275:

2 **Լեո,** Յայոց պատմություն, «Երկերի ժողովածու», երկրորդ, գիրք երրորդ, Եր., 1973, էջ 439:

լուց մոտ երկու տարի անց Սիմեոն Երևանցին արդեն տպարան ստեղծելու ցանկություն է ունեցել: Նա լավ գիտակցում էր, թե ինչ կարևոր նշանակություն կունենա տպարանի հիմնումը հայրենաբնակ հայության համար:

Սիմեոն Երևանցին տպագրական գործին քաջածանոթ էր դեռևս Կ. Պոլսում և Զմյուռնիայում նվիրակ եղած տարիներին, երբ հասցրել էր ուսումնասիրել այդ քաղաքներում գործող հայկական տպարանների աշխատանքը. «Նախքան կաթողիկոս ընտրվելը,- գրում է Ռ. Իշխանյանը,- Սիմեոնն իբրև Էջմիածնի նվիրակ, ապրել էր Կոստանդնուպոլսում, ծանոթ էր տեղի հայկական գաղութի մշակութային կյանքին, մասնավորապես տպարանների աշխատանքներին: Եղել էր նաև Զմյուռնիայում, աջակցություն ցույց տվել տեղի հայկական տպարանի աշխատանքին»[3]:

Ավելին՝ հայրենիքում տպարան ստեղծելու միտքը Սիմեոն Երևանցու մոտ ծնվել է դեռ Հնդկաստանում, որտեղ նա 1744 թ. մեկնել էր որպես նվիրակ: Հնդկաստանում անցկացրած տարիներին նա ծանոթացել էր մադրասաբնակ հայ մեծահարուստ Գրիգոր Չաքիկյանի (Միքայելյան)[4] հետ, որը հետագայում մեծ օժանդակություն ցուցաբերեց Հայաստանում տպարան հիմնելու գործին: Դա էր պատճառը, որ կաթողիկոս դառնալուց կարճ ժամանակ անց Սիմեոն Երևանցին սկսում է նամակներ ուղարկել տարբեր գաղթօջախներ, որոնցում գործում էին հայկական տպարաններ:

Կաթողիկոսը տեղեկություններ ուներ, որ Ամստերդամում Առաքել Պողոսյան անունով մի հայ տպագրության համար պատրաստված հայերեն տառեր ունի: Սակայն վերջինս համապատասխան մասնագետներ չունենալու պատճառով չէր կարողանում տպարան բացել: Ուստի Սիմեոն Երևանցին նամակ է ուղարկում Զմյուռնիայի առաջնորդ Ղուկաս Կարնեցուն, որպեսզի նա ամեն գնով այդ տառատեսակները տեղափոխի Մայր Աթոռ. «Սիմէոն լուր առաւ թէ Առաքել Պօղոսեան Զուղայեցի մը Ամսդերտամի մէջ Յովհաննէս-Միքայէլ Ֆլայշման (Fleischmann) փորագրիչի ձեռքով հայերէն տառեր պատրաստել տուած է, բայց զտպագրատուն հաստատել ոչ կարէր վասն գործաւորաց պակասութեանց»[5]:

Պատասխան չստանալով Առաքել Զուղայեցուց, Սիմեոն Երևանցին Զմյուռնիայի առաջնորդ Ղուկաս վարդապետի միջոցով այս անգամ էլ փորձում է համոզել Զմյուռնիայում գործող հայկական տպարանի տիրոջը՝ ակնեցի Մարկոսին, որպեսզի նա համաձայնի իր տպարանը տեղափոխել Հայաստան: Սակայն Մարկոսը պատճառաբանում է, թե պետք է Սաղմոսները տպելու գործը ավարտին հասցնի, նոր միայն կկարողանա տպարանը տեղափոխել Հայաստան: Բայց Սիմեոն Երևանցին նորից է հանձնարարում Ղուկաս վարդապետին, որպեսզի վերջինս բանակցի Մարկոսի հետ: Կաթողիկոսը պարզաբանում էր, որ եթե Մարկոսը դրամի պատճառով չի ուզում Հայաստան տեղափոխել տպարանը, ապա Ղուկաս վարդապետը թող ցանկացած գումար վճարի՝

---

3 **Ռ. Իշխանյան,** Հայ գիրքը 1512-1920 թթ., Եր., 1981, էջ 92:

4 **Գրիգոր Չաքիկյանը** (հայտնի է նաև **Միքայելյան** և **Խոջաջանյան** ազգանուններով), մադրասաբնակ հայ մեծահարուստ էր, ով դրամական մեծ օգնություն ցուցաբերեց Մայր Աթոռի տպարանի և թղթի գործարանի կառուցմանը: 1771 թ. Գ. Չաքիկյանը Շահամիր Շահամիրյանի հետ ազգային-ազատագրական գործունեություն է ծավալել «Մադրասյան խմբակ»-ի կազմում՝ փորձելով Ռուսաստանի և Վրաստանի օժանդակությամբ ազատագրել Հայաստանը պարսկական և թուրքական լծից:

5 **Մ. արք. Օրմանեան,** Ազգապատում, Ա հատոր, մասն Ա., Բ տպագրություն, Պէյրութ, 1953, էջ 938:

առաջարկելով, որ Մարկոսը Սաղմոսների տպագրումը կարող է շարունակել Հայաստանում: Սակայն Ղուկասին նորից չի հաջողվում համաձայնության գալ: Կարճ ժամանակ անց Սիմեոն Երևանցին է՛լ ավելի խիստ մեթոդներով է փորձում կարգավորել հարցը և համոզել Մարկոսին: Բայց դա էլ կաթողիկոսին չի հաջողվում, և նրա ջանքերը մնում են ապարդյուն:

Այս առիթով հայ տպագրության պատմության ուսումնասիրողներից՝ Մ. Հովհաննեսյանը գրում է. «Մարկոս անսաստող իրեն եղած այս հրամանին բայց իր յամառութիւնը անպատիժ չի մնաց, ինչու որ թէեւ 1759ին Մեկ. Ժամգ., 1761ին Խորհրդատետր եւ 1762ին Եզնիկ մը տպած էր բայց մտադրած Սաղմոսի տպագրութիւնը ի գլուխ չի կրցաւ հանել. եւ այնու հետեւ իր տպարանին խօսքն անգամ չենք լսեր»[6]:

Ա. Ալպոյաճյանը ևս կիսում է այս կարծիքը և շարունակելով Մ. Հովհաննեսյանի միտքը՝ եզրակացնում. «Սակայն անհավանական է ենթադրել, թե անոր կազմակերպության մեջ դեր ունեցած ըլլար «Մահտեսի Մարկոս». վասնզի որևէ հիշատակություն չկա այս մասին»[7]: Ըստ Ա. Ալպոյաճյանի՝ պատճառն այն էր, որ ամենայն հավանականությամբ, երբ Մարկոսը մերժել է կաթողիկոսին, վերջինս Ղուկաս Կարնեցու միջոցով փակել է տվել Զմյուռնիայում նրա հիմնած հայկական տպարանը. «Կկարծվի որ Ղուկաս վրդ. դադրեցուցած է այդ տպարանը օգտվելով պետութենեն պատրիարքներու և առաջնորդներու տրված իրավասութենեն, որով անոնց իրավունք կտրվեր հսկելու տպագրյալ գիրքերու վրա»[8]:

Այսպիսով՝ թե՛ Մ. Հովհաննեսյանը և թե՛ Ա. Ալպոյաճյանը հիմք են ընդունում այն փաստը, որ Մարկոսի տպարանը, որը գործում էր Զմյուռնիայում, փակվել է 1762-1763 թթ.: Դրանից ելնելով՝ նրանք ենթադրում են, որ տպարանի գործունեությունը կարող էր կասեցնել արդեն կաթողիկոս ընտրված Սիմեոն Երևանցին, քանի որ վերջինս Մայր Աթոռում տպարան ստեղծելու համար Էջմիածին էր հրավիրել Մարկոսին և մերժում ստացել:

Բայց երբ հետևում ենք իրադարձությունների ընթացքին, տեսնում ենք, որ կաթողիկոսը տպարանի հիմնադրմանն ուղղված նամակագրական կապը սկսել է միայն 1765 թվականին: Հենց այդ ժամանակ է նա նամակով հանձնարարել Ղուկաս Կարնեցուն՝ բանակցել Մարկոսի հետ, իսկ Զմյուռնիայի տպարանը փակվել է 1765-ից առաջ: Ուստի քիչ հավանական է, որ այդ տպարանը փակված լինի Սիմեոն Երևանցու միջոցով: Այս կարծիքի օգտին են խոսում ևս մի քանի փաստարկներ. **նախ**՝ 1763 թ. Սիմեոն Երևանցին նոր էր ընտրվել կաթողիկոս, որից հետո խնդիրներ էին առաջացել Կ. Պոլսի Հայոց պատրիարքության հետ: Եվ երբ նա հազիվ հասցրել էր հարթել այդ հարցերը, Ձենդ Քերիմ խանը պատերազմ էր սկսել Երևանի խանի դեմ: Որպեսզի կաթողիկոսի կյանքին վտանգ չսպառնա, Հուսեին Ալի խանը նրան խորհուրդ էր տվել ժամանակավորապես հաստատվել Ալաշկերտում: Բնականաբար, Սիմեոն Երևանցին այդ ընթացքում չէր կարող մտածել տպարան ստեղծելու մասին, առավել ևս՝ վրեժխնդիր լինել Մարկոսից: **Երկրորդ**՝ ինչպես արդեն ասացինք, Սիմեոն Երևանցին Զմյուռնիայում անցկացրած տարիներին մեծ ավանդ էր ունեցել

6 **Մ. Յովհաննէսեան,** Քննական պատմութիւն ԺԹ դարու, Փարիզ, 1901, էջ 10:

7 **Ա. Ալպոյաճյան,** Զմյուռնիո տպարանները, «Պատմաբանասիրական հանդես», 1964, N 2, էջ 73 (հոդվածը աննշան կրճատումներով տպագրել է բանասեր Մ. Հակոբյանը):

8 **Ա. Ալպոյաճյան,** Զմյուռնիո տպարանները, էջ 73:

վերը նշված տպարանի ստեղծման գործում: Նա գիտակցում էր, թե այդ տպարանը մեծ դեր կարող է ունենալ արևմտահայության համար, քանզի Զմյուռնիան լցված էր կաթոլիկ միսիոներներով և քիչ էր հաղորդակցվում Մայր Աթոռի հետ: Ուստի Զմյուռնիայում գործող տպարանը մեծ դեր էր խաղում ազգապահպանության առումով: Եւ **վերջին ու** ամենակարևոր փաստն այն է, որ **Մարկոս տպագրիչը այնուամենայնիվ եկել է Էջմիածին**: Ապացույցը նրա գերեզմանն է, որը գտնվում է Մայր Աթոռի միաբանների ընդհանուր գերեզմանոցում: Մարկոսի տապանաքարը կրում է հետևյալ արձանագրությունը. «Այս է տապան հանգստեան Ակնցի տպագիր ծերունազարդ Մարկոսին, որ եկեալ ի Սուրբ Աթոռս և շինեալ զգործարանն, փոխեցաւ առ Քրիստոս բարի մահուամբ, որում Տէր ողորմեսցի, ի ՌՄԻ. Թվին (1771)»[9]:

Ուստի հիմնավորված է հայ տպագրության պատմության ուսումնասիրողներից՝ Ռ. Իշխանյանի այն պնդումը, որ, այնուամենայնիվ, հետագայում Մարկոս տպագրիչն օգնություն է ցույց տվել Էջմիածնի տպարանի կարգավորմանը. «Վերջապես, Էջմիածին է գալիս Զմյուռնիայից հրավիրված տպագրիչ Մարկոսը, բայց հմուտ վարպետի օգնությունը Էջմիածնի տպարանին կարճատև է լինում. ծերունին շուտով մահանում է»[10]:

Իսկ մինչ այդ, հանդիպելով Մարկոսի ցուցաբերած համառությանը՝ Սիմեոն Երևանցին փորձել է կապ հաստատել Կոստանդնուպոլսում բնակություն հաստատած Էջմիածնի նախկին միաբան Սարգիս Սարաֆյանի հետ[11]: Սարաֆյանն ուներ տպագրության համար փորագրված հայերեն տառեր: Սիմեոն Երևանցին նրան նամակ է ուղարկում՝ փորձելով համոզել, որ այդ տառերը կա՛մ վաճառի, կա՛մ նվիրաբերի Մայր Աթոռին. «Եւ էր ի Պոլիս առ Կեսարեցի Սարգիս վարդապետն գիր տպագրական փորագրեցեալ ի Վենետիկ, յոյժ ազնիւ և քաղցրատես, որով զԷֆէմէրտէս գիրքն տպեալ էր և պահեր առ ինքն զգիրն և ոչ տայր ումեք և ոչ ինքն զտպագրատուն բանայր: Վասնորոյ՝ գրեաց առ նա սրբազան Վեհին զթուղթ սիրոյ և խնդրեաց տալ զտպագրական գիրն սրբոյ Աթոռոյս, կամ գնով և կամ 'ի յիշատակ հոգւոյն իւրոյ»[12]:

Կաթողիկոսը մի նամակ էլ ուղարկում է Մովսեսին, որը Մայր Աթոռի ներկայացուցիչն էր Կ. Պոլսում, որպեսզի նա բանակցի Սարգսի հետ և, որքան հնարավոր է, մատչելի գնով կարողանա գնել նրա տառատեսակները: Սարաֆյանի հետ երկար բանակցելուց հետո Մովսեսին չի հաջողվում համաձայնության գալ, քանի որ Սարգիսը ավելի շատ դրամ էր ուզում, քան կաթողիկոսը նախատեսել էր: Բայց դեռ բանակցությունները չավարտած՝ Սարգիսը այդ տառատեսակները վաճառում է Գևորգ անունով մի դպրի, որը Կոստանդնուպոլսում տպարան է հիմնում:

Այսպիսով, Սիմեոն Երևանցին մոտ վեց տարի նամակներ է հղում տար-

---

9 **Արտակ եպս. Սմբատեանց,** Սուրբ էջմիածնի միաբանության գրական-կրթական գործունեությունը եւ Մայր Աթոռի տպարանը, «Էջմիածին» ամսագիր. 1972, N 2, էջ 51:

10 **Ռ. Իշխանյան,** Հայ գիրքը 1512-1920 թթ., Եր., 1981, էջ 95:

11 **Սարգիս արքեպիսկոպոս Սարաֆյանը** սկզբնական շրջանում եղել է Կեսարիո թեմի առաջնորդը: Հետագայում մեկնում է Եվրոպա՝ Վենետիկ, որտեղ հիմնադրում է գրադարան: Սարաֆյանը տասը տարվա ընթացում՝1742-1752 թթ., հրատարակում է մոտ տասնհինգ անուն գիրք, որոնցից առավել հայտնի է էֆիմերտեի գուշակությունները: Վենետիկից Սարաֆյանը վերադառնում է Կ. Պոլիս, որտեղ մեղադրվում է կաթոլիկության մեջ և հալածվում:

12 **Գ. քահ. Աղանեան,** «Դիւան հայոց պատմութեան», գիրք Գ, Սիմէոն կաթուղիկոսի յիշատակարանը, Թիֆլիս, 1894, էջ 551:

բեր անձանց, որոնք կարող էին ցանկության դեպքում օգտակար լինել տպարանի ստեղծմանը: Եվ տեսնելով, որ իր ջանքերն ապարդյուն են անցնում, կաթողիկոսը փորձում է տպարան հիմնել իր ուժերով: Բայց այդ գործընթացը կապված էր մեծ ծախսերի հետ, որը Մայր Աթոռը չուներ և բացի այդ, Սիմեոն Երևանցին խնայողաբար էր վերաբերվում Մայր Աթոռի գումարներին: Երկիրը գտնվում էր ծայրաստիճան քայքայված վիճակում, ինչը լավ էր հասկանում կաթողիկոսը: Եվ որպեսզի կարողանա լուծել նյութական խնդիրը, նա այդ մասին տեղեկացնում է հնդկահայ մեծահարուստ Գ. Չաքիկյանին: Վերջինս նույնպես դիմել էր Սիմեոն Երևանցուն և առաջարկել ինչ-որ բանով օգտակար լինել Մայր Աթոռին: Եվ երբ Սիմեոն Երևանցին կաթողիկոս է ընտրվում, նա հիշեցնում է իր խոստման մասին. «... Սիմէոնի կաթուղիկոսութիւնը շնորհաւորելով՝ յիշեցրեց նորան իւր հոգևոր կտակը և խնդրեց չմոռանալ իրագործել այն: Սիմէոնն անյապաղ պատասխանում է թէ ս. Էջմիածնին ամենից աւելի հարկաւոր են նախ տպարանը...»[13]:

Գ. Չաքիկյանը, իր խոստմանը համաձայն, ուղարկում է որոշ գումար, որով կաթողիկոսը պետք է հոգար տպարանի կառուցման ծախսերը: Կարճ ժամանակ անց Մայր Աթոռի տարածքում սկսվում են կառուցման աշխատանքները: Շենքը հիմնելուն զուգընթաց ստեղծվում է նաև գրաձուլարան, որը կարևոր էր տպարանի գործունեության համար: Աշխատանքներին մասնակցում են տեղի բնակիչները և հոգևորականները: Հատկապես աչքի են ընկնում ոսկերիչ Հարություն եպիսկոպոսը և Մկրտիչ արք. Շոռոթեցին, ում մասին Ս. Երևանցին իր «Տօնացոյց»-ի հիշատակարանում գրում է. «Արժանի է յիշման և Շօռօթեցի Մկրտիչ արքեպիսկոպոսն, որ իբրու նախկին հեղինակ եղեւ գործոյս այսորիկ որքան առ փորագրութիւնն ի պողովատեայս»[14]:

Տպարանի կառուցման վերաբերյալ կարևոր նյութ է պարունակում նաև Սիմեոն Երևանցու «Գիրք աղօթից, որ կոչի Ջբոսարան հոգևոր»[15] աշխատությունը, որը տպագրվել է 1772 թ. հենց իր հիմնած տպարանում: Նրա վերջում կա հիշատակարան, որի մեջ կարդում ենք, թե ովքեր են իրենց մասնակցությունը բերել տպարանի կառուցման և հետագա աշխատանքների ընթացքում. «...Նաեւ՝ յիշեսջիք զհոգեծին որդեակն Վեհիս մերոյ զԽսահակ շնորհաշատ վարդապետն գեօղարքունցի, որ աշխատի անձաձիր ի շարադրելն, ի սրբագրելն եւ ի փորձատեսս լինիլն տառից, բառից, բանից եւ այլոց որպիսութեանցն գործոյս եւ գրեթէ սա' կանոնաւորէ յամենայնի զգործս զայս: ... Այլեւ՝ յիշեցէ՛ք միանգամայն՝ զհարազատ որդիսն եւ զշնորհասուն աշակերտսն Վեհիս մերոյ զՅովսէփ վարդապետն եւ զԵփրեմ սարկաւագն զշարօղսն գրոցս: Նաեւ՝ զՄկրտիչ վարդապետն, զՅովհաննէս աբեղայն. զՆերսէս սարկաւագն, զյառաջնթաց Վարդանն եւ զայլ պաշտօնեայսն, որք ամենեքեան բաց ի յատուկ պաշտամանց իւրեանց, պաշտօնատարք եղեն սիրահար ըղձիւ եւ ա՛յս գոր-

13 Դիւան Հայոց պատմութեան, գիրք Գ, էջ ճԾէ:
14 **Սիմէոն Երեւանցի,** «Տօնացոյց», Էջմիածին 1774, էջ 562:
15 Սիմեոն Երևանցու հիմնած տպարանում տպագրված առաջին գիրքը կաթողիկոսի «Գիրք աղօթից, որ կոչի Ջբոսարան հոգևոր» փոքրիկ աշխատությունն էր՝ տպագրված 1772 թ.: 1773 թ. տպագրվում է Սիմեոն Երևանցու «Տաղարան»-ը: Սակայն «Տօնացոյց»-ի հիշատակարանում կա վկայություն, որ տպարանում առաջինը փորձել են տպագրել Սաղմոսարանը, ինչը չի ստացվել. «Յորում տպեցաք նախապէս զքանի հատ Սաղմոս, որ զտիպաւորութիւնս շատ ունէր նկատմամբ տպեցմանն»: Տե՛ս **Սիմէոն Երեւանցի,** «Տօնացոյց», Էջմիածին 1774, էջ 554:

ծոյս...»[16]:

Մայր Աթոռի հոգևորականներից գրաշարությամբ զբաղվում էին Հովսեփ վարդապետը և Եփրեմ սարկավագը, իսկ Իսահակ Գեղամացին իրականացնում էր տպագրվող նյութերի սրբագրումը և խմբագրումը: Շուտով Իսահակ վարդապետը այնքան է հմտանում տպագրական գործի մեջ, որ ստանձնում է տպարանի տնօրենի պաշտոնը: Կարծիք կա, որ Էջմիածնի տպարանին մեծապես օգնել է նաև տպագրության հայտնի մասնագետ Պողոս Արապյանը[17], որը Կ. Պոլսից էր ժամանել Մայր Աթոռ:

Փաստորեն 1771 թ. Ամենայն Հայոց կաթողիկոս Սիմեոն Երևանցուն հաջողվեց ստեղծել տպարան, որը դարձավ առաջինը մայր հողի վրա: Էջմիածնի նորաբաց տպարանը անվանվեց «Սուրբ Գրիգոր Լուսավորիչ»[18]: Երկար չարչարանքներից հետո կաթողիկոսը իր նախաձեռնած գործը պատվով հասցրեց ավարտին, «զի յաջողակ լիցի գործն տպագրութեան. զոր և եմոյծ իսկ և հաստատեաց յաջողմամբն Աստուծոյ»[19]:

Խոսելով հայրենիքում առաջին տպարանի ստեղծման մասին, հարկ է նշել, թե Սիմեոն Երևանցին ինչպիսի քաղաքական պայմաններում կարողացավ իրականացնել տպարանի ստեղծումը: Պարսկաստանի իշխանության ներքո երկիրը քայքայվել էր, կաթվածահար վիճակում էր գտնվում կրթական գործը: Նման պայմաններում Մայր Աթոռում տպարան հիմնելը կարևոր քայլ էր՝ մաշտոցյան գրերի գյուտից երկար դարեր հետո: Սիմեոն Երևանցին այդ դժվարին պայմաններում կարողացավ անել այն, ինչն ուղղակի անհավանական էր թվում: Հայաստանում պետական իշխանության բացակայության պայմաններում նա հիմնեց տպարան, ինչը Պարսկաստանում և Վրաստանում տեղի ունեցավ ավելի ուշ՝ «... իբրև առաջին մամուլ Հայաստանի, Կովկասեան երկրի և պարսից տէրութեան մէջ»[20]: Իսկ պարսկերեն լեզվով առաջին գիրքը տպագրվել է միայն 1830 թ.: Տպարանի ստեղծումով հայ ժողովուրդը գրագիտության ասպարեզում ավելի առաջավոր դիրքերում հայտնվեց, քան իրեն շրջապատող այն ազգերը, որոնք պետականություն ունեին:

2.Թղթի գործարանի հիմնումը

Տպարանի հիմնադրումից հետո առաջ եկավ տպագրության համար անհրաժեշտ թղթի խնդիրը: Սկզբնական շրջանում թուղթը Հայաստան էր բերվում եվրոպական երկրներից, ինչը բավականին մեծ ծախսերի հետ էր կապված:

---

16 **Սիմէօն Երեւանցի,** «Գիրք Աղօթից», Եր., 2003, էջ 122-124:

17 **Պողոս Արապյանը** (1742-1835 թթ.) ստեղծել է թուրքերեն տպատառ գրերը, որոնք իր պատվին կոչվել են «Արապօղլու»: Նրա համբավը այնքան մեծ է եղել Օսմանյան կայսրության մեջ, որ Մահմուդ II (1808-1839 թթ.) սուլթանը 1816 թ. հատուկ հրովարտակով Արապյանին նշանակում է արքունի տպարանի տեսուչ: Արապյանը վրաց Հերակլ II արքայի հրավերով նաև Վրաստանում է հիմնում տպարան, որի համար վրաց արքան բավականին մեծ գումար է տալիս վերջինիս: Այս տաղանդավոր մարդը հորինել է հայերեն լեզվով նոր տառատեսակներ՝ տպագրության համար և իր կյանքի մեծ մասը նվիրել է հայ տպագրության զարգացմանը:

18 Տպարանի շենքի ճակատային մասում թողնվել է արձանագրություն, որի մեջ նշված են Սիմեոն Երևանցու և Գրիգոր Չաքիկյանի անունները, ովքեր նախաձեռնեցին տպարանի կառուցումը: Այդ արձանագրությունը այժմ պահվում է Հայաստանի պատմության թանգարանում:

19 **Սիմեոն կաթողիկոս Երևանցի,** «Ձամբռ», Վաղարշապատ, 1873, էջ 44:

20 **Ա. Երիցեան,** Պատմական տեսութիւն հայ տպագրութեան մինչեւ տասնեւիններորդ դարը, «Փորձ» ամսագիր, Թիֆլիս, 1881, N 4, էջ 25:

Ուստի Սիմեոն Երևանցին որոշում է տեղում կառուցել թղթի գործարան: Դրա համար Հայաստանում կային բավականին լավ պայմաններ: Ինչպես Գյուտ քահանա Աղանյանցն է գրում՝ «...թղթաշինութեան անհրաժեշտ երկու գլխաւոր պայմանները՝ բամբակի ու ջրի առատութիւնը, որոնցով օժտուած է Արարատեան դաշտը, մեծ յաջողութիւն էին խոստանում»[21]: Բայց թղթի պատրաստման համար հայրենիքում մասնագետներ չկային: Այդ պատճառով կաթողիկոսը արհեստավորներ է հրավիրում Եվրոպայից:

Ժամանած մասնագետները գործարանը կառուցում են վանքի հարավային մասում՝ գեղեցիկ և սրբատաշ քարերով. «...յԵւրոպայէ հմուտ արուստագէտներ բերել տալով, 1774-ին՝ տաճարին հարաւային կողմը ու անկէ բաւական հեռու՝ մեծ շէնք մը կառուցանելով, հոն զետեղեց թղթաշինութեան համար բերել տուած գործիքները»[22]: Թղթի գործարանի հիմնադրման բոլոր ծախսերը նս հոգացել է Գ. Չաքիկյանը: Այդ ընթացքում տպարանը արդեն բնականոն հունով աշխատում էր, և գնալով տպագրության որակն ավելի էր լավանում: Սիմեոն Երևանցին Գ. Չաքիկյանին գրած 1772 թ. կոնդակի մեջ հաստատում է այդ իրողությունը. «... Իսկ յայսմ թուովն նոյն Տաղարանն՝ զոր յառաջ տպեալ էաք, այժմ եւս նոյն Աղօթից գիրն քոյ գրովն վերստին տպել ետուք վասն բարւոք փորձառութեան գործարանին: Ահա երկու հատ եւս ի նմանէ եդաք ի մէջ թղթոյս եւ յղեցաք վասն սիրելւոյդ, առ ի տեսանել եւ ուրախանալ քեզ այդու եւս, զի ահա տիպն դորին փոքր ինչ լաւագոյն է քան զԱղօթից գրոյ տիպն, որ ահա այդպէս օրըստօրէ լաւապես հաստատի տպարանն եւ Աստուծոյ...»[23]:

Սկզբնական շրջանում Սիմեոն Երևանցին թղթի պատրաստման մասնագետներ է հրավիրում Պարսկաստանից, որտեղ գործում էին թղթի գործարաններ, բայց հարևան երկրից ժամանած վարպետները չեն արդարացնում իրենց: Որպեսզի չձգձգվեն աշխատանքները, Սիմեոն Երևանցին Գրիգոր Չաքիկյանին խնդրում է օգնել իրեն, իսկ վերջինս, օգտագործելով իր կապերը, կարողանում է գտնել երկու մասնագետների՝ Բեյսոնին և Դեսիոռին, որոնք Ֆրանսիայից ժամանել էին Կ. Պոլիս: Նրանք խոստանում են երկու տարվա ընթացքում կարգավորել տպարանի աշխատանքները և տեղի ուժերով աշակերտներ պատրաստել: Պայմանավորվածության դիմաց Գրիգորը նրանց թանկարժեք նվերներ է տալիս և 14000 ռուբլի: Որպեսզի ֆրանսիացի մասնագետները Հայաստանում լեզվի հետ կապված խնդիրներ չունենան, Գ. Չաքիկյանը նրանց թարգմանիչ է տրամադրում: Բայց կարճ ժամանակ անց Բեյսոնը և Դեսիոռը դժվարություններ են առաջացնում[24]: Նրանք ցանկանում էին ժամանակից շուտ գումարը վերցնել և հեռանալ. «...արտասահմանից եկած վարպետները

21 Դիւան հայոց պատմութեան, գիրք Գ, էջ ճԿԲ:

22 **Գ. Զարբհանալեան,** Պատմութիւն հայկական տպագրութեան սկզբնաւորութենէն մինչեւ առ մեզ, Վենետիկ. 1895, էջ 186:

23 Դիւան հայոց պատմութեան, գիրք Գ, էջ ճԿԲ:

24 «Վասն թղթաշինութեան գործեացն հաստ և մեծ փայտք պիտոյացան: Եւ յերկրեջս մերում ըստ այնքանութեան փայտք ոչ գտանեցան: Եւ լուաք թէ՝ ի մայրին Բամբակաձորու հաստ և մեծ փայտք շատ գոն: Վասն որոյ և սրբ. ծեհն զթղթաշէնսն ընդ մեր միրզային եդեալ յղեաց անդ, զի երթեալ տեսցեն զփայտն, և որոց հաւանեսցին, նշանադրեալ ցուցանիցեն արանցն մերոց, զի հատեալ բերեցին: Որոց աղագաւ առ Բամբակէն՝ Դամղուլին և Մահմատ Աղայն ուրոյն ուրոյն զերիս թուղթս յանձնարարութեան գրեաց վասն թղթաշինացն, զի ի յերթալն նոցա անդ, ի սէր ունիցին զնոսա, և բանից նոցա ձեռնտու լիցին»: Տե՛ս Դիւան հայոց պատմութեան, գիրք Ը, էջ 366:

սկզբում մտադրություն են ունեցել փողերն ստանալ ու փախչել..»[25]: Վարպետները թղթի պատրաստման գործը երկարաձգում են մոտ երկու տարի, ուստի տեսնելով, որ վերջիններս զբաղվում են խաբեբայությամբ, Սիմեոն Երևանցին որոշում է պատժել նրանց: Նրա «Յիշատակարան»-ում տեղեկություն կա, որ կաթողիկոսը ժամանակից շուտ գործից ազատ է արձակել վարպետներից մեկին, քանի որ նա չէր կարողանում թղթի գործարանի համար պահանջվող աշխատանքը կատարել[26]: Ըստ երևույթին, կարելի է կարծել, որ վարպետներից յուրաքանչյուրը ցանկանում էր յուրացնել ողջ գումարը: Որովհետև, երբ Սիմեոն Երևանցին աշխատանքից ազատում է կրտսեր վարպետին, մյուսն անմիջապես կաթողիկոսից պահանջում է, որ «... վեց տարվա պայման կապեն և վարձը տան իրեն գործը վերջացնելու համար»[27]: Այս անգամ կաթողիկոսը խոստանում է գործարանը հունի մեջ դնելուց հետո միայն վճարել գումարը: Վարպետները կրկին բարդություններ են առաջացնում, որոնք հավելյալ ծախսեր էին պահանջում: Սիմեոն Երևանցին փորձում է նորից համոզել, բայց պարզվում է, որ նրանք երդվել են իրենց մասնագիտությունը այլոց չսովորեցնել: Կաթողիկոսը փորձում է դիմել ավելի խիստ միջոցների. հրամայում է, որպեսզի ֆալախա[28] բերել տան և վարպետներին պատժեն, այնուհետև նետեն սառցարան. «... Սիմէոնը բարկացած փարախայ բերել տուեց նոցա պատժելու և սպառնաց նոցա սառցատուն ձգել...»[29]: Վարպետները խնդրում են վեց ամիս ժամանակ՝ տպարանի աշխատանքները կարգավորելու համար: Սիմեոն Երևանցին տալիս է ևս մեկ հնարավորություն: Այս անգամ նրանց վրա հսկիչ է կարգում Իսահակ Գեղամացուն, որի աշխատասիրության շնորհիվ գործարանը շուտով սկսում է կանոնավոր աշխատել: Տպարանի և թղթի գործարանի ստեղծման վերաբերյալ Սիմեոն Երևանցին «Պարտավճար» գրքի մեջ ունի մի բանաստեղծություն, որի սկզբնամասում կարդում ենք.

Նոր թուղթ՝ նոր գիր՝ նոր տպարան
Բանքն ևրս իլոյս ածան
Յատուկ պարգևք նորոգական
Իներ դարուս աղքատութեան
Հանք պարծանաց մեզ յայտնեցան[30]...

---

25 **Ճեմարանցի,** Սիմեոն կաթողիկոս Երեւանցի, «Էջմիածին» ամսագիր, 1947, Է-Ը, էջ 60:

26 «Իսկ և ըստ որում ասացաւ, յամսոյս ԺԱ թղթաշէն ֆռանկքն, տակաւին զլաւ իմն թուղթ ոչ հանին, զի և մեք միամտեաք և ուրախանայք: Ուստի՝ ի մեծ տարակուսանս կալով մեր, ստիպեաք զնոսա միշտ, զի թէ զլաւ թուղթս հանել գիտեն, հանցեն, ապա թէ ոչ, տացեն մեզ ստոյգ իմն պատասխանի: Իսկ փոքր թղթաշէն ֆռանկն՝ որոյ անունն էր Մուսի Դէյսօր, զոր և Յովաննէս կոչէին. դեռ մինչև ցարդ մեզ ո՛չ պիտայացաւ: Քանզի՝ զթղթատունն համայն պարագայիւքն մեծ թղթաշէնն՝ որ Մուսի Բէյսօն՝ Յովսէփ ևս կոչիւր, շինեցուցեալ ի գլուխ եբեր, ցուցանելով զչափսն, և զձևսն, և յօրինելով զամենայն յոյժ հաստատանագոյն: Իսկ փոքր ամենևին բանի իմեք չպիտոյացաւ, զի ասէին թէ՝ սա միայն լաւ թուղթ հանել գիտէ, և յորմէ հետէ եկին աստ, մինչ ցայժմ կայր պարապ և դատարկ: Իսկ յորժամ թուղթ հանելոյ ժամանակն եկն, յայնժամ, բաց ի յո՛չ հանելոյն զլաւ թուղթ, սկսաւ ևս մեծաւ գժտութեամբ վարիլ առ ընկերն՝ և առ թարջիմանն իւրեանց, որ և եդ ի մտի գնալ յերկիրն իւր, և ո՛չ ետ հանգստութիւն ընկերացն, տաղտկացուցանելով և զլսելիս սրբ. վեհին ի ձեռն նոցին, թէ թէ զիս յղեա յերկիրն իմ...»: Տե՛ս Դիւան հայոց պատմութեան, գիրք Ը, էջ 526:

27 Արտակ եպս. Սմբատեանց, Սուրբ էջմիածնի միաբանության գրական-կրթական գործունեությունը եւ Մայր Աթոռի տպարանը, «Էջմիածին» ամսագիր, 1972, է, էջ 37:

28 Ֆալախան պատժի յուրահատուկ ձև է, որը հնում կիրառվել է վարժարաններում և ուսումնարաններում: Պատժվողի ոտքերը մտցնում էին այդ սարքի մեջ և պտտելով բարձրացնում վեր, այնուհետև դալար ճիպոտներով սկսում էին հարվածել ոտքերի տակ, որը բավականին ցավոտ էր:

29 Դիւան հայոց պատմութեան, գիրք Գ, էջ ՃԿԴ:

30 **Սիմէօն Երեւանցի**, Գիրք որ կոչի Պարտավճար, էջմիածին, 1783, էջ 374:

Գյուտ քահանա Աղանյանցը նշում է, որ Սիմեոն Երևանցին Էջմիածնում արտադրված թղթով շտապում է տպել իր «Գիրք, որ կոչի Պարտավճար» աշխատությունը[31] և այն ուղարկում է Գ. Չաքիկյանին՝ միաժամանակ հայտնելով, որ գործարանի կառուցման համար ծախսվել է 7.800 թուման: Գրիգոր աղան ուղարկում է ողջ գումարը և իր շնորհակալությունը հայտնելով կաթողիկոսին՝ միաժամանակ նվիրաբերում է նրան 400 զույգ հախճապակե ըմպանակներ [32]՝ վրան ոսկե տառերով գրված. «Ի վայելումն Տեառն Սիմէոնի սրբազան կաթուղիկոսին ամենայն Հայոց: Ի ՌՄԻՁ թուին »[33]:

Սիմեոն Երևանցին առանձին նամակով հինգհազար բարերարին հայտնում է թղթի գործարանի վարպետների խաբեության մասին: Նա Գ. Չաքիկյանին է ուղարկում նաև գործարանում պատրաստված թղթից չորս օրինակ. «Երկուսը առաջին անգամ հանած փոքր տեսակից և երկուսը յետոյ հանած մեծ տեսակից»[34]:

Էջմիածնում պատրաստավված թղթի վրա կային հետևյալ նշանները. մի կողմում գրված էր «Էջմիածին» և «Ս.Կ.», որը նշանակում էր Սիմեոն կաթողիկոս, իսկ հակառակ կողմում՝ «թ. ՌՄԻԵ» և «Գ.Մ.», այսինքն՝ գործարանի հիմնադրման տարեթիվը և գործարանի կառուցմանը նյութական օգնություն ցուցաբերած Գ. Չաքիկյանի անվան և ազգանվան սկզբնատառերը:

3. Թղթի գործարանի և տպարանի հետագա ճակատագիրը

Էջմիածնի տպարանը և թղթի գործարանը Սիմեոն Երևանցու կաթողիկոսության տարիներին կանոնավոր կերպով աշխատել են: Գործարանը ավերվում

31 Ըստ Գյուտ Աղանյանցի. «Նոր շինած թղթով կաթուղիկոսը շտապեց տպել իւր «Պարտավճար» աշխատութիւնը, որի տպած օրինական ուղարկելով Գրիգոր աղային…»: Տե՛ս Դիւան հայոց պատմութեան, գիրք Գ, էջ ճԿԵ: Հայտնի է, որ «Պարտավճարը» տպագրվել է 1779-1783 թթ.: Ճիշտ է, Ս. Երևանցին իր կենդանության օրոք նախաձեռնեց գրքի տպագրությունը, բայց 1780 թ. մահացավ և չհասցրեց ավարտին հասցնել այն: «Պարտավճար»-ի տպագրության աշխատանքները սկսում են միայն 1779 թ., այն վերջնականապես տպագրվում է Ղուկաս Ա Կարնեցի կաթողիկոսի օրոք՝ 1783 թ: Այս մասին է վկայում նաև «Պարտավճար»-ի վերջում զետեղված հիշատակարանը. «Որ և ո՛չ կարացել տանիլ դառնակսկիծ աղէտիցն, և մանաւանդ՝ ըզբարեխնամ տեսուչե վերին կոչողին՝ օրհասն մահու ևս ժամանել առ բարւոք ծերիւն, անկաւ ի ցաւագին հիւանդութիս. ...եւ իբրև ետես զինքն մերջել ի հրաւիրումն մեծի Կոչնատեառն, թէպտ կասեցաւ յիւրոյն տենչմանէ զոր ունէր առ տեսուի կատարման տպեցման գրոցս, սակայն ըզ կատարելուեն իւրում ևս հոգացել յաղագս այսորիկ, պատվիրոաց հոգեծին որդւոց և աշակերտաց իւրոյ, զկենի վախճանի իւրոյ զմնացորդն գրոցս տպեցուցանել...»: Տե՛ս Սիմէօն Երեւանցի, Գիրք որ կոչի Պարտավճար, էջմիածին, 1779-1783 թ., էջ 378-379: Թերևս հայտնի չէ, թե Գյուտ Աղանեանցը ինչ աղբյուրից է օգտվել, սակայն վերը նշված հարցի շուրջ ոչ ոք չի ակնարկել, բացի Արտակ եպիսկոպոս Սմբատյանցից, որն էլ ամենայն հավանականությամբ իր «Սուրբ էջմիածնի միաբանության գրական-կրթական գործունեությունը և Մայր Աթոռի տպարանը» աշխատանքը գրելիս օգտվել է Գյուտ Աղանյանցից: Տե՛ս «էջմիածին» ամսագիր, է, 1972 թ., էջ 41: Գ. Աղանյանցը ասում է, որ Երևանցին «Պարտավճար»-ը Գրիգոր Չաքիկյանին է ուղարկել 1777 թ.: Ուրեմն կարելի է ենթադրել, որ գիրքը արդեն 1777 թ. տպագրված էր: Հարց է առաջանում. ինչու՞ չի շարունակվել «Պարտավճար»-ի հետագա տպագրությունը, եթե արդեն մեկ օրինակ տպագրվել էր: Գիտակցելով «Պարտավճար»-ի կարևորությունը կաթոլիկ տարրերի դեմ պայքարի առումով, տրամաբանական կլիներ շարունակել տպագրությունը: Սակայն այդ մասին մեզ ոչինչ չհաջողվեց գտնել:

32 Գ. Աղանեանցը նշում է, որ այս նվերները ուղարկելուց մի քանի օր հետո մահանում է Գրիգոր Միքայելյանը (Չաքիկյանը) և դրանք չնախատեսված պատճառներով շատ ուշ են հասնում Մայր Աթոռ և մինչև տեղ կհասնեին, մահանում է նաև Սիմեոն Երևանցին: Ճանապարհին ըմպանակները կոտրվում են և միայն չորս ըմպանակ է հասնում Էջմիածին:

33 Դիւան հայոց պատմութեան, գիրք Գ, էջ ճԿԵ:

34 Նույն տեղում:

է արդեն Ղուկաս Ա Կարնեցու (1780-1799 թթ.) օրոք: Պատճառ հանդիսացան XVIII դարի վերջին Արարատյան դաշտում հաճախակի ընթացող պատերազմները: Եվ քանի որ գործարանը գտնվում էր Մայր Աթոռի հիմնական պարիսպներից դուրս, այն ենթարկվեց ավերածությունների: Այս կապակցությամբ Հ. Շահխաթունյանցը նշում է. «... այլ զկնի վախճանի նորա՝ ի պատճառս յարուցման պատերազմաց ի զանազան նահանգակալ իշխողաց ի վերայմի մեանց ի դաշտի աստ Արարատեան՝ շուրջ զայսու պատրիարգական Աթոռով, խանգարեացն մեծ մասամբ՝ և գլխովին իսկ գործարանն թղթաշինութեան. զի գոլով արտաքոյ պարսպին, երկաթեայ և պղնձեայ գործիք նորա յափշտակեալ ի զօրաց ասպատակողացն՝ ցան և ցիր եղեն ի հեռավոր տեղիս: Մինչև զի և զձուլեալ տառն տպարանին ի հեռավոր քաղաքաց գնեալ ի գերչացն հայազգի անձիք՝ վերադաձուցանէին յԱթոռ այսր զկնի այնպիսի պատերազմաց...»[35] :

Թղթի գործարանի ավերման ստույգ թվականը հայտնի չէ: Կաթողիկոսների այդ շրջանի գրագրությունների ուսումնասիրությունից պարզվում է, որ Ղուկաս Կարնեցու օրոք տպարանն արդեն ավերված էր: Ուստի 1784 թ. Կ. Պոլսի նվիրակ Իսահակ վարդապետը Ղուկաս կաթողիկոսին ուղղված իր նամակներից մեկում ցանկություն էր հայտնել որպես նվիրակ գումար հավաքել և այն օգտագործել գործարանի վերակառուցման համար: Երկրում տիրող դժնդակ պայմաններից ելնելով՝ Ղուկաս Կարնեցին պատասխան նամակում նշում էր. «...այլ ժամանակս ձեռնտու չէ, մանաւանդ խղճալի Նիկողայոսն և վախճանվեցաւ և նոյն արհեստին այլ գիտող ոչ գոյ, վասն որոյ թէ հետեւիլ ևս ջանասցուք, անօգուտ լինի»[36] :

Հակառակ թղթի գործարանի ավերմանը՝ 1771 թ. հիմնադրված տպարանը, ո՛չ անշուշտ 1772-1780 թթ. ծավալներով, բայց շարունակում էր իր գործունեությունը. « ...Իսկ տպագրատունն թէպէտ և անկաւ յառաջին վայելչուցեն իւրոց, այլ այնու ամենայնիւ խնամօք պահպանեալ՝ տակաւին ևս ի լոյս ընծայէ զկարի կարևոր մատեանս եկեղեցական՝ և զայս» [37]:

Էջմիածնի տպարանը կարճ ընդմիջումներով գործել է մինչև 1919 թ.[38]: Խորհրդային Միության տարիներին այն վերանորոգվել է Վազգեն Ա Պալճյան կաթողիկոսի (1955-1994 թթ.) նախաձեռնությամբ՝ 1961 թվականին, ինչի մասին վեհափառը ակնարկում էր Հայաստանում առաջին տպարանի հաստատման 200-ամյակին նվիրված իր կոնդակում[39]:

---

35 **Յովհաննու Շահխաթունյանցի** Ստորագրութիւն կաթուղիկէ էջմիածնի և հինգ գավառացն Արարատայ, հատոր առաջին, էջմիածին, 1842, էջ 100:

36 Դիվան հայոց պատմութեան, Նոր շարք, աշխատասիրությամբ Վ.Ռ. Գրիգորյանի, հ. Ա, Եր., 1984, էջ 417:

37 **Յովհաննու Շահխաթունյանցի** Ստորագրութիւն կաթուղիկէ էջմիածնի և հինգ գավառացն Արարատայ, հատոր առաջին, էջմիածին, 1842, էջ 100:

38 Ս. Երևանցու հիմնադրած տպարանի հետագա գործունեության վերաբերյալ ուսումնասիրություններ է կատարել Շ. Շահնազարյանը: Մանրամասները տե՛ս Նոր նյութեր Հայաստանի առաջին տպարանի պատմության վերաբերյալ, «Պատմաբանասիրական հանդես», N 1, 1963, էջ 262-266: Տե՛ս նաև՝ էջեր Հայաստանի առաջին տպարանի պատմությունից, «էջմիածին» ամսագիր, ԺԲ, 1972թ, էջ 66-72:

39 «... Հայ ժողովրդի հոգևոր լուսաւորութեան և ազգային-մշակութային զարթօնքի ճանապարհին, 1771 թուականը մի կարևոր հանգրուան է հանդիսանում, երբ լուսաբնակ Սիմէոն կաթողիկոս Երևանցու օրոք, ս. էջմիածնում հիմնադրում է հայատառ տպարան, առաջինը հայոց աշխարհի ամբողջ տարածքի վրայ: Տպարան, որ սկսել է գործել 1772-ին, իր կողքին ունենալով նաև թղթի գործարան: ...Սուրբ էջմիածնի տպարանը տարիներ շարունակ առանց ընդհատումի գործել է մինչև 1919 թուականը, լոյս ընծայելով բազում օգտակար՝ կրօնական, եկեղեցական, եկեղեցական պատմութեան

Տպագրության կարևորությունը նախ և առաջ կայանում էր ազգապահպանման խնդրի մեջ: Այն նաև գրագիտության լայն տարածման միջոց էր, ինչը նպաստեց ազգային ինքնաճանաչողությանը և օգնեց այլադավան հոսանքների դեմ մղվող պայքարին՝ տարածելով հայ հոգևորականների գրչին պատկանող դավանաբանական աշխատություններ: Նյութական ծանր պայմաններում տպարանը հանդես եկավ նաև որպես արդյունաբերական միջոց՝ հօգուտ Մայր Աթոռի, քանզի տպագրված գրքերի վաճառքը շահույթ էր բերում եկեղեցուն:

Սիմեոն Երևանցին իր ժամանակի ուսյալ առաջնորդներից մեկն էր և քաջ գիտակցում էր, թե հայ ժողովրդի համար ստեղծված դժարին պայմաններում ինչպիսի մեծ դեր կարող է ունենալ տպարանը: Նա դարձավ առաջին անձը, ով նախաձեռնեց Հայաստանում տպարան հիմնելու գործը և այն պատվով հասցրեց իր ավարտին՝ դառնալով «հայաստանյան տպագրության նախահայրը»[40]:

Summary

THE ESTABLISHMENT OF THE FIRST PRINTING HOUSE AND PAPER FACTORY IN ARMENIA

On the Occasion of the 500th Anniversary of Armenian Printing

Sasun M. Haroutyunyan

One of the most important developments in human history has been the invention of the printing press. It gave birth to revolutionary changes in world civilization. Many nations urgently wanted to make use of this invention in order to develop their science and culture.

The modern art of printing was also acquired by the Armenian nation. The first Armenian publishing house was founded in 1771 by the All-Armenian Catholicos, Simeon A. Yerevantsi. The funding for the construction was provided by Grigor Chakikyan a benefactor from the Indian-Armenian Diaspora.

After the foundation of the printing house the problem of paper arose. At first it was imported to Armenia from European countries, which proved to be very expensive. In order to limit the expenses, Simeon A Yerevantsi seized the opportunity to start paper production in Armenia. By 1776, the construction of a paper factory in Echmiadzin was completed.

Thus, the foundations of both the first printing house and paper factory in Armenia are closely affiliated with Simeon A. Yerevantsi.

ու արուեստի, պատմա-բանասիրական, ազգային հայրենասիրական և գեղարուեստական գործեր...: Տիրոջ ողորմութեամբ, Մեր օրոք Մայր Աթոռի տպարանը վերաբացուեց 1961 թուականին, ամբողջապէս նոր մեքենաներով և սարքաւորումներով առատատուր լումաներովը Միացեալ Նահանգաց մեր հաւատացեալ զաւակների, տպարան, որ գործում է նոյն ոգով և նոյն արդիւնաւէտութեամբ, ինչպէս այն հիմնուել էր մեզանից երկու հարիւր տարիներ առաջ, տեսիլքովը և տքնութեամբը մի մեծ ու շինարար Հայրապետի»: Տե՛ս «Ամենայն հայոց վեհափառ հայրապետի կոնդակը Մայր Աթոռի Տպարանի հիմնադրության երկուհարյուրամյակի առթիվ», «Էջմիածին» ամսագիր, N ԺԲ, 1972, էջ 3-5:

40 **Ա. Հատիտյան,** Սիմեոն Երեւանցի, «Էջմիածին» ամսագիր, N ԺԲ, 1972, էջ 28: